

ΓΕΩΡΓΙΟΥ ΔΗΜΗΤΡΟΚΛΑΔΗ, Οἱ οὐνογύχοι γροιστανοχοὶ γαοί, Ἀθῆναι, 1976, 557 σελ.

ԳԵՈՐԳԻՈՍ ԴԻՄԻՏՐՈՎԱԿԻՍ, Քրիստոնեական երկկոնիս¹ տաճարները, Աթենք, 1976, 557 մեծադիր էջ, 635 պատկեր:

Այս գիրքը մենագրական ուսումնասիրություն է քրիստոնեական երկկոնիս տաճարների մասին, որոնց թիվը, հեղինակի հաշվումներով, չի անցնում հարյուրից: Հեղինակը նկատի ունի մեկ ընդհանուր տարածություն, բայց երկու բեմ կամ արսիդ ունեցող տաճարները, որոնք գրեթե բոլորն էլ միանավ բազիլիկաներ են: Գ. Դիմիտրովա-Կալիսը այդ տիպի տաճարները բաժանում է երեք խմբի: 1) երկու կատարյալ բեմ ունեցող տաճարներ, որոնք հանդիպում են մեծ մասամբ Հայաստանում, 2) մեկ բեմ և մոտավորապես նույն լայնության ու բարձրության, տաճարի առանցքի երկարությանը համաչափորեն տեղադրված երկկոնիս տաճարներ և 3) մնացած՝ իրենց տեսակի մեջ եզակի երկկոնիս տաճարները:

Աշխատության երկրորդ, ամենաընդարձակ գլուխը (էջ 15—318) իրենից ներկայացնում է հիշյալ տիպի տաճարների Corpus-ը, անհրաժեշտ հատակագծերով ու նրանց վերաբերյալ հարուստ մատենագիտությամբ: Այդ տաճարները հանդիպում են հետևյալ վայրերում. Փոքր Ասիա (Թիլ, էսքի Պերտեքի հայկական տաճարը, էսքի Քախթա՝ հին Ապամեան, Տրապիզոն, Հավդդիկիա, Իսավրիա), Հայաստան (Վարազի անապատը, Անգեղավանքի Ս. Հովհաննես Կարապետի, Վանի Գանձակ գյուղի, Ղուշլիի, Սանահնի Հարության, Հերհերի Ս. Աստվածածնի, Քոբայրի տաճարները, Գոշավանքի Հրեշտակապետաց վանքը, Հաղբատի զանգակատան մատուռը), Վրաստան (Վակիսոպելի), Ռուսաստան (Յարոսլավլի Եղիա մարգարեի տաճարը), հունական կղզիներ, Յամաքային Հունաստան, Բուլղարիա, Հարավսլավիա, Իտալիա, Ֆրանսիա, Շվեյցարիա, Գերմանիա և Ավստրիա:

Երրորդ գլխում («Երկկոնիս տաճարների ընդհանուր և կոնկրետ բնութագիրը») Գ. Դիմիտրովա-Կալիսը քննության է առնում տվյալ տիպի տաճարների աշխարհագրական տեղաբաշխման հարցը: Հեղինակը նկատում է, որ դրանք կառուցված են զխավորապես կղզիներում և ծովափնյա շրջաններում: Մայր ցամաքում են

գտնվում հինգ տաճար, այն էլ լճերի կամ գետային կղզիների վրա և կամ էլ լճերից ու գետերից ոչ հեռու վայրերում (Գոշավանքը՝ Սեվանի մոտ, Գանձակը՝ Վանա լճի մոտ, Անգեղավանքը՝ էնգել-սուի աջ ափին, Ղուշլին՝ Արփաշայի ափի մոտ): Հեղինակը ցույց է տալիս, որ հիշյալ տիպի տաճարների մեծ մասը գերեզմանատան եկեղեցիներ են, որոնցից, ի միջի այլոց, հիշում է Սանահնի, Ղուշլիի, Անգեղավանքի, Հերհերի եկեղեցիները:

Չորրորդ գլուխը նվիրված է երկկոնիս տաճարների առաջացման վերաբերյալ տեսությունների քննությանը: Հեղինակը հատկապես անդրադառնում է Պրոսպեր Մերիմեի, Enlart-ի, G de Angelis d'Ossat-ի, Ն. Պալփախյանի Mirabella Robertini-ի, Roberto Tronti-ի, Semavi Eyice-ի կարծիքներին, հույն մասնագետների՝ ճարտարապետների ու հնագետների տեսություններին:

Հինգերորդ գլուխը վերնագրված է «Հին ժառանգությունը». այստեղ խոսվում է հին աշխարհի զույգ կամ երկվորյակ աստվածությունների (Դիոսկուրոսների և այլն), նրանց համար կառուցված զույգ սրբարանների, ինչպես և անտիկ շրջանի մի երկկոնիս տաճարի մասին: Հեղինակի կարծիքով հեթանոսական շրջանի ավանդույթները անցան քրիստոնեությանը և վաղ քրիստոնեության շրջանում սկսեցին կառուցել զույգ սրբերի հիշատակին նվիրված վկայարաններ (Սերգիոսի և Բակքոսի, Միքայել և Գաբրիել հրեշտակապետների և այլն):

Վեցերորդ գլուխը վերաբերում է քրիստոնեական գերեզմանային տաճարներին, որոնք որպես կանոն երկկոնիս են: Սրանց նախատիպը քրիստոնեական երկկոնիս դամբարաններն էին, որոնք էլ իրենց սկիզբն են առնում հեթանոսական շրջանի հուշարձաններից:

Վերջին՝ յոթերորդ գլխում ամփոփված են հեղինակի եզրակացությունները: Նա գտնում է, որ քրիստոնեական երկկոնիս տաճարներում հեթանոսական շրջանի ժառանգությունը սոսկ «արտաքին» է, իսկ նման տիպի կառույցներին դիմելու «ներքին» պատճառները պաշտամունքային բնույթի են: Դրանցից մեկը զույգ սրբերի համար կառուցված լինելն է (այդպիսիները, սակայն, XI դարից առաջ չեն հանդիպում): Մյուս պատճառն այն է, որ նույն տաճարը երկու տարբեր դավանության հավատացյալների

¹ Հայերենում ընդունված է այդ տիպի տաճարները երկարսիդ կոչել, բայց քանի որ հեղինակը տարբերություն է դնում երկկոնիս և երկարսիդ հասկացությունների միջև, թողնում ենք նրա օգտագործած տերմինը:

արարողությունների համար է նախատեսված եղել: Վերջապես, երկկոնիս տաճարների առաջացման մի այլ պատճառը կապված է հին միակոնիս տաճարների վերակառուցման հետ, կամ էլ դրանք գերեզմանատան եկեղեցիներ են, որոնք իրենց հերթին առաջացել են ուշ անտիկ շրջանի երկկոնիս դամբարանների ազդեցության տակ:

Գիրքն ունի հարուստ մատենագիտություն և ցանկեր: Մեծ տեղ են գրավում հայկական ճարտարապետության վերաբերյալ ուսումնասիրությունները: Հեղինակը քաջատեղյակ է Սովետական Հայաստանում և արտասահմանում լույս տեսած, ինչպես և հայկական միջնադարյան ճարտարապետության վերաբերյալ նախասովետական շրջանի հետազոտություններին: 543—547-րդ էջերում տրված է գրքի ֆրանսերեն ամփոփումը:

Ճարտարապետներին ու հնագետներին թողնելով սույն աշխատության մասնագիտական վերլուծությունը, անենք մի քանի մանր դիտողություններ: «Անապատ»-ը ընդունված է որպես հատուկ անուն (էջ 29): Թեև հունարեն ճիշտ գրում է ΝΑΟΣ ΤΟΥ ἁγίου Ἀσπυτζίου (Հարության տաճար), բայց փակագծերի մեջ ուղում

է տալ տաճարի նաև «հայերեն» անվանումը և գրում է ΑΡΥΤΗΟΝ (հալփախչյանի ուսերեն հոգվածի հիման վրա ուղում է գրել ΑΡΥΤΙΟΝ): Հույն ընթերցողը չի կարող հասկանալ այդ բառը հունարեն է գրված, թե՛ ուսերեն, քանի որ բոլոր տառերն էլ երկու լեզուների համար նույնն են. թեև ոչ բոլորն են արտասանվում միատեսակ: Բացի այդ, տաճարի «անունը» վերցրել է հոլովված ձևով, ուսերենի սեռական հոլովի վերջավորությամբ հանդերձ: Ավելորդ չէ ասել, որ հալփախչյանը հիշյալ տաճարի վերաբերյալ գրել է νεροβν Αρυτιονα, կարծես խոսքը Հարություն անունով սրբին է վերաբերում և ոչ Քրիստոսի հարության: Եվրոպական ուսումնասիրություններից օգտվելով հեղինակը թեև միանգամայն ճիշտ գրում է Herher, բայց կողքին՝ հալփախչյանի հոգվածի հիման վրա ավելացնում է նաև ΓΕΡΓΕΡΕ (այն էլ ուսերենի ներգոյական հոլովի վերջավորությամբ): Վերջապես, գրում է Ναός του ἁγίου Astvatzatzin, որտեղ Աստվածածինը արական սեռին պատկանող է ստացվել:

Պատմ. գիտ. դոկտոր Հ. ԲԱՐԹԻԿՅԱՆ